

Այս մասին ա՛յսպէս կրօն է նախարարայի յիշեալ բառագիրը՝ Jose Yanguas, մի եւ նոյն գրքին մէջ, մի եւ նոյն տեղ, անշուշտ քաղելով հին վաւերագրերէ, ինչպէս կը դնէ անոնց թիւն ալ՝ Գորոց 47, թիւ 24 եւ 25. — « Նոյն տարին (1383) Լեւոն Լուսինեան, որ ինքզինքը Հայոց թագաւոր կանուանէր, այցելեց տէր Կարոլոս Բ-ին, որ անոր ընծայեց արծաթէ փոքրիկ նաւ մը, մէջը 2000 Արագոնի ֆլորինով : Տէր Կարոլոս կրսէր, թէ « Մեր սիրելի եղբայրակիցը Լեւոն, թագաւոր Հայոց(1), որ մեր երկիրը « գալով այցելեց մեզ, եւ որուն ընծայեցինք 2000 ֆլորին Արագոնի, մեր « ոսկեղօծ արծաթէ սիրուն նաւերէն մէկին մէջ դնելով . . . : Տասնհինգ « ֆլորին ալ տուինք յիշեալ թագաւորին աճալարարին (yuglar), նոյնպէս եւ « քսան ֆլորին՝ նոյն թագաւորին հրեշտակին (heraut) : » Տէր Կարոլոս ընծայեց նաեւ Լեւոնի՝ 13 լիտր շաքար, 8 լիտր կաղին, 1 լիտր վարդեջուր, կէս լիտր կոճապղպեղ, մէկ ունկի մշկընկուզի ներքին կեղեւ (macis), կէս լիտր անխոն, եւ կէս լիտր ալ շաքարեղէն : »

Նախարարայէն անցաւ Բէաոն, Ֆուայի իշխանութեան պետ Գաստոն Գ Կոմսին (1343—1391), որ Ֆէրբու անունով ալ ծանօթ է պատմութեան մէջ : Կոմսին կողմէ մեծամեծ պատիւներ ու պարգեւներ ընծայուեցան Լեւոնի. նոյնպէս եւ հարիւր զօրական ու հարիւր աղեղնաւոր՝ իր թագաւորութեան փրկութեան համար, վճարուելով նաեւ անոնց ամսական թոշակները : Բէաոնէն ալ ելլելով դարձեալ մտաւ Արագոն, որուն թագաւորը՝ Պետրոս Գ՝ խոստացած էր օգնել նաւերով ու զինուորներով, որպէս զի Լեւոն կարենայ վերստին ձեռք ձգել իր թագաւորութիւնը. բայց Պետրոսի եւ արքունի

(1) Jose Yanguas ուրիշ վաւերագրէ մը (Գորոց 137, թիւ 35) առնելով ծանօթութիւն մը կը դնէ հոս եւ կրօն, թէ Նախարարայի Յովնանէս Բ քաղաւորի ժամանակ (1425—1479) Հայոց քաղաւորն իր մեկ եղբօր հետ նստեց այցելած է Նախարար, եւ քաղաքին՝ բամբիւ Բլանկա՝ Լեւոնի եղբօր ու անոր կնոջ կարել տուած զգեստներուն արժէքը վճարած է. « En tiempo del rey Don Juan 2º vino otra vez a Navarra el rey de Hermenia con un hermano: la reina Donna Blanca mando pagar el coste de coser las ropas del hermano del rey de Hermenia y de su muger. » Լեւոնի եղբայրը շատնց մեռած էր . իսկ իր մահը 1393-ին պատահած ըլլալով՝ անկարելի է որ 1425-79 տարիներու ընթացքին մեզ կրկին այցելած ըլլայ Նախարար. ուստի՝ Բլանկա քաղաքին իր բարեսուսքեան երեսէն խաչագողի մը գոն դարձած ըլլալու է դժբախտաբար, ինչպէս մեր դարուն ալ պահաս չեղան խեղճ Լեւոնի անուր շահագործողներ, մինչեւ իսկ անուանելով ինքզինքնին «Լեւոն է» . . .